«ՍՏԵՄ ԱՐՄԵՆԻԱ» ԱՋԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

Մայիս 2025

ԲԱՑԱՀԱՅՏԵՔ ՁԵՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ և ՄՏԱՎՈՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մրցույթը

«ՍՏԵՄ Արմենիա | Մայիս 2025» մրցույթը բաղկացած է վեց քննադատական մտածողության առաջադրանքներից, որոնք պետք է լուծվեն վեց ժամվա ընթացքում: Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի միջին և ավագ դպրոցներում սովորող 13-ից 18 տարեկան աշակերտները: Պատասխանները պետք է ներկայացվեն մրցույթի օրը մինչև ժամը 15:00-ն այս հղումով, Մասնակցել ներդիրի տակ:

2. Առաջադրանքներ

Առաջադրանքներն ունեն տարբեր աստիճանի բարդություն: Առանձին առաջադրանքների միավորները նշված չեն, բայց սկզբնական առաջադրանքներն ավելի հեշտ են, քան հաջորդները: Վեց առաջադրանքների միավորների գումարը կազմում է 20:

3. Արհեստական Բանականության (ԱԲ) Օգտագործումը

“ՍՏԵՄ Արմենիա” մրցույթների առցանց ձևաչափը մասնակիցներին հնարավորություն է տալիս օգտվել բազմազան ռեսուրսներից, այդ թվում ԱԲ չաթբոտներից: Թեև ԱԲ օգտակարությունը բազմաթիվ հարցերում անհերքելի է, բարդ հարցումների դեպքում դրա արդյունքը հաճախ կարող է սխալ լինել: Մենք ձգտում ենք ստեղծել այնպիսի առաջադրանքներ, որոնք պահանջում են անհատական մտածողություն ու հետազոտական հմտություններ: Կարող ենք վստահությամբ նշել որ ԱԲ-ն լուծումների ուղղակիորեն պատճենումն ու տեղադրումը հեշտությամբ կբացահայտվի:

4. Տեխնիկական Նկատառում

Մենք քայլեր ենք ձեռնարկել մրցույթի սահուն տեխնիկական գործընթացն ապահովելու համար: Պատասխաններ մուտքագրելու հետ կապված հնարավոր խնդիրները նվազագույնի հասցնելու համար մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել համակարգիչ կամ պլանշետ, այլ ոչ թե հեռախոս: Եթե բախվում եք տեխնիկական դժվարությունների, փորձեք օգտագործել այլ վեբ բրաուզեր: Խնդրում ենք նկատի ունենալ, որ մենք ցավոք չենք կարող անհատական տեխնիկական աջակցություն տրամադրել:

5. Զգուշացում

Լուծումները ներկայացնելիս դուք երաշխավորում եք, որ հանդիսանում եք դրանց հեղինակը: ՄԻ ԿԻՍՎԵ՛Ք ձեր լուծումներով մրցույթի այլ մասնակիցների հետ, հակառակ դեպքում կորակազրկվեք: Ավելին, ուրիշները կարող են ձեր իսկ լուծումները ներկայացնել ձեզանից շուտ և հաղթելու ավելի մեծ շանսեր ունենան:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #1

ՔՈՂԱՐԿՎԱԾ ԵՌԱՆԿՅՈՒՆՆԵՐ

Քանի՞ եռանկյունի կա այս գծապատկերում:



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #2

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍ

«Այսպիսով,- սկսեց պատմության դասախոս, պրոֆեսոր Շահինյանը,- այսօր մենք կանդրադառնանք հետևյալ ելույթի հետ կապված պատմական համատեքստին»: Նա ցուցադրեց կարճ տեսանյութ (հղում), ապա ավելացրեց. «Այս ելույթը հնչեց այն տարում, որը նշանավորվեց Աֆրիկայում ապագաղութացման ալիքով, Սառը պատերազմի լարվածության սրմամբ և քաղաքացիական իրավունքների շարժումների նշանակալի փուլով՝ մի դարաշրջան, երբ աշխարհը արագորեն փոխում էր իր քաղաքական և սոցիալական կարգը»: Այնուհետև նա մարտահրավեր նետեց ուսանողներին. «Եթե որևէ մեկը կարող է ինձ ասել, թե ով է ելույթ ունեցել, որտեղ և երբ, կստանա լրացուցիչ միավորներ»:

Կարո՞ղ եք ստանալ ձեր միավորները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #3

ԴԺՎԱՐ ԹԻՎ

Ինչո՞վ է ավարտվում այս թվային հաջորդականությունը:

Թարգմ ոմոռմիրմն իմոդ ոստոսիրմն իմոնստուրտ ը օժդրբէ։

88, 12, 7, 11, ?

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #4

ԿԱՅԾԱԿ և ՈՐՈՏ

Ֆիզիկայի ուսուցիչ պարոն Համբարձումյանը առաջադրանքներ տվեց իր երեք աշակերտներին՝ Աստղիկին, Բաբկենին և Գայանեին: Երեկոյան ուժեղ ամպրոպ է սպասվում, ասաց նա, և քանի որ դուք ապրում եք տարբեր գյուղերում, ես ուզում եմ, որ դուք ձեր հեռախոսներով ձայնագրեք որոտը, որպեսզի վաղը փորձենք հաշվարկել կայծակի հարվածի վայրը:

Աշակերտները ապրում են Արարատի մարզում, Աստղիկը Կանաչուտ գյուղում, Բաբկենը՝ Գետազատում, իսկ Գայանեն՝ Բերդիկում: Ըստ որում, նրանց տները գտնվում են համապատասխան գյուղերի կենտրոնների մոտ:

Հաջորդ օրը ֆիզիկայի դասին նրանք իրենց ձայնագրությունները միավորեցին Գայանեի ձայնագրած տեսանյութի մեջ (հղում), և ստացվեց, որ սկզբում որոտը լսում է Գայանեն, հետո Աստղիկը, և վերջում Բաբկենը: Այդ գրանցումների հիման վրա նրանք կարողացան պարզել կայծակի հարվածի մոտավոր տեղանքը:

Որտե՞ղ էր հարվածել կայծակը:



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #5

ՉԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԿՈՂՈՊՈՒՏՆԵՐ

Նոյեմբերի 1-ը Անուշի առաջին օրն էր որպես Լոռիի քրեական հետախուզության բաժանմունքի դետեկտիվի օգնական: Ավագ դետեկտիվ Թումանյանը ողջունեց նրան: «Ժողովուրդ, սա Անուշն է՝ մեր թիմի նոր անդամը: Նա այս տարի ավարտել է Վանաձորի համալսարանի կիբեռնետիկայի բաժնի մագիստրատուրան: Մենք հույս ունենք որ Անուշի գիտելիքները և կարողությունները կօգնեն մեր չբացահայտված գործերին»: Բոլորը ծափահարեցին, իսկ կրտսեր դետեկտիվ Սարոն կատակով հարցրեց. «Իսկ մագիստրոս Անուշը ամուսնացած է՞»: Սա ծիծաղ առաջացրեց, ինչը արագորեն մարեց Թումանյանի խոժոռ հայացքից, որից հետո նա Անուշին տվեց առաջին առաջադրանքը:

«Այս տարի,- ասաց դետեկտիվը,- մենք ամեն ամիս ունեցել ենք տան կողոպուտ նույն հանցավոր խմբի կողմից: Եվ ամեն անգամ հանցագործները թողել են այս գրառումները կպցված ամենաերևացող տեղերում»: Նա սեղանի վրայով սահեցրեց ձեռագիր գրառումները դեպի Անուշը: «Մենք կարծում ենք, որ յուրաքանչյուր գրառում կոդավորված հաղորդագրություն է, որը պարունակում է հաջորդ կողոպուտի ամսաթիվը: Սա հանդուգն մարտահրավեր է, և քո խնդիրն է, Անուշ, այս ծածկագիրը բացահայտելը: Եթե դա հաջողվի, մենք վերջապես կկարողանանք պարզել նրանց ծրագրած նոյեմբերի կողոպուտի ամսաթիվը և ձերբակալել այս հանցագործներին»:

Օրվա վերջում Անուշը ներկայացրեց իր բացահայտումները, ինչը սենյակում մեծ ոգևորություն առաջացրեց, և վստահություն, որ նրանք վերջապես ճիշտ ուղու վրա են:

Ի՞նչ պարզեց Անուշը:



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #6

ԿՈՏՐՎԱԾ ԿՇԵՌՔ

Դպրոցի քիմիայի լաբորատորիայում Անին թվային կշեռքի վրա կշռեց վեց արտաքնապես նույնական մետաղյա գնդիկներ և գրանցեց դրանց զանգվածը՝ 47 գ, 48 գ, 49 գ, 69 գ, 71 գ և 73 գ: Նա Արմենին խնդրեց յուրաքանչյուր գնդիկ պիտակավորել իր համապատասխան քաշով: Ավելի ուշ ուսուցիչը Արմենին խնդրեց կրկնակի ստուգել, որ յուրաքանչյուր պիտակը ճիշտ է տեղադրված: Ցավոք, կշռելու ժամանակ Արմենը պատահաբար վայր գցեց կշեռքը, ինչը կոտրվեց: Այնուհետև ուսուցիչը դասարանին հարց տվեց. «Դեռ հնարավո՞ր է հաստատել, որ պիտակները ճիշտ են տեղադրված՝ օգտագործելով միայն նժարային կշեռքը առանց կշռաքարերի»: Կարճ ժամանակ անց Սուրենը պնդեց, որ կարող է դա անել՝ ընդամենը երկու կշռումով:

Ճի՞շտ է Սուրենը: Եթե այո, ապա ինչպե՞ս: